ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ԲՈՒԼՂԱՐԱՀԱՅ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ՄԱՐԻԱՄ ՀԱԿՈԲՅԱՆ

Բանալի բառեր - Գերագույն հոգևոր խորհուրդ, Սոֆիայի առաջնորդարան, Բուլղարիայի թեմական խորհուրդ, թեմական առաջնորդ, բուլղար կառավարություն:

1920-1930-ական թվականներին Մայր Աթոռ սբ. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի և Բուլղարիայի հայոց թեմական խորհրդի* հարաբերությունները խաղաղ ընթացք չունեին[1]: Դա պայմանավորված էր ինչպես խորհրդային իշխանության կողմից որդեգրված ընդհանուր հակակրոնական, աթեիստական գաղափարախոսությամբ և դրա հետևանքով հայոց եկեղեցու նկատմամբ կիրառվող քաղաքականությամբ, այնպես էլ բուլղար կառավարության կողմից հայոց թեմական առաջնորդարանի նկատմամբ կիրառվող սահմանափակումներով:

Գերագույն հոգևոր խորհրդի և թեմական խորհրդի միջև հարաբերությունների վատթարացման մեկնարկ հանդիսացան 1924թ. օգոստոսին Ֆիլիպեում թաղական խորհուրդների ներկայացուցիչների մասնակցությամբ գումարված պատգամավորական ժողովը, որտեղ կազմվեց համայնքային ներքին ղեկավարման մարմինների կանոնագիրը և ընտրվեց՝ թեմական խորհուրդ[2]: 1927թ. Սոֆիայի առաջնորդարանի շենքում թեմի

---

* Հայ առաքելական եկեղեցու վարչական կառույց, որի հիմնական գործառույթը թեմի հոգևոր, կրթական, վարչական և տնտեսական ոլորտներին վերաբերող խնդիրների կարգավորումն է:

[1] Գերագույն հոգևոր խորհուրդը հայ եկեղեցու բարձրագույն հոգևոր իշխանությունն է, որի կազմը ընտրվում է ազգային եկեղեցական ժողովում 6-9 մարդուց: Կազմում ընտրվում են ինչպես հոգևորականության բարձր դասին պատկանող անձինք այնպես էլ աշխարհականներ: Գերագույն խորհրդի նախագահը հայոց հայրապետն է: Գերագույն խորհրդը իրականացնում է եկեղեցական կանոնադրության մշակումը, կաթողիկոսական ընտրությունների անցկացումը, եկեղեցական ժողովների գումարումը, հոգևոր կոչումների շնորհումը և ազատումը, առաջացած վեճերի կարգավորումը և այլն:

[2] Առաջին համաշխարհային և հայ-թուրքական (1919-1922թթ.) պատերազմների տարիներին Բուլղարիայում գործել է ժամանակավոր թեմական խորհուրդ, տե՛ս Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան 2002, էջ 185, տե՛ս նաև Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ) ֆ. 409, ց. 1, գ. 5080, թ. 1:

առաջնորդ Ստեփաննոս արքեպիսկոպոս Հովակիմյանի[1] հրավերով ժողով է գումարվում, որի ընթացքում ներկայացվում է բուլղար կառավարության, արտաքին գործերի և դավանանքի նախարարության կողմից 1926թ. դեկտեմբերի 29-ի № 233 և 1927թ. հունվարի 5-ի № 4 հրամանագրերով հաստատված բուլղարահայոց թեմական խորհրդի նոր կազմը, հետևյալ անդամներով. նախագահ- Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Ստեփաննոս արքեպիսկոպոս Հովակիմյան, անդամներ՝ Էմանուել Ջերահոֆ, Կրոն Միքայելյան, Թագվոր Թագվորյան, Անդրեաս Հակոբյան, Աբրահամ Գրիգորյան, Գրիգոր Զաքարյան, Մկրտիչ Ներսիսյան: Ժողովի անդամները, գոհունակությամբ ընդունելով արտաքին գործերի և դավանանքի նախարարության այս որոշումը միաժամանակ կազմակերպում են դիվանի ընտրությունները, որի արդյունքում ատենապետ է ընտրվում Էմանուել Ջերահոֆը, ատենադպիր՝ Կրոն Միքայելյանը, գանձապահ՝ Աբրահամ Գրիգորյանը[2]:

Մայր Աթոռում կաթողիկոսական տեղապահի ընտրության և թեմական կանոնադրության հաստատման լուրը մեծ վրդովմունքի պատճառ է դառնում, քանի որ այն կատարվել էր առանց հայոց հայրապետի իմացությամբ և նրա համաձայնությունը ստանալու: Թեմական խորհուրդը իր հերթին չէր ընդունում, որ խախտել է հայոց բարձրագույն հոգևոր իշխանության կանոնակարգը և կատարվածի վերաբերյալ տարբեր բացատրություններ էր տալիս: Վերջինս հավաստմամբ դեռևս 1925թ. Եվրոպայի հայոց թեմի կաթողիկոսական պատվիրակ Գրիգորիս եպիսկոպոս Պալաքյանի միջոցով կանոնադրության նախագիծը ուղարկվել էր Գերագույն հոգևոր խորհրդին, մինչդեռ Գերագույն հոգևոր խորհուրդը այն չէր ստացել: Մեկ այլ դեպքում, թեմական խորհուրդը փորձում էր բացատրել, որ կանոնադրության դրույթները ոչ թե եկեղեցական, այլ վարչական բնույթ էին կրում, սակայն, ի պատասխան դրա, Գերագույն հոգևոր խորհուրդը պնդում էր, որ թեմերում ոչ միայն եկեղեցական, այլև ազգային, վարչական բնույթին վերաբերող խնդիրների մասին որոշում կայացնողը և վերջնական կարգավորողը հանդիսանում էր Ամենայն հայոց կաթողիկոսը[3]:

Գերագույն հոգևոր խորհրդի համար անընդունելի էին հատկապես կանոնադրության 66-րդ և 67-րդ հոդածները, որոնց համաձայն՝ թեմական առաջնորդը ընտրվելու էր ընդհանուր ժողովի կողմից և թեմական խորհրդի առաջարկով: Այդ ընտրությունը վավերացվելու էր Բուլղարիայի

---

[1] Ստեփաննոս արքեպիսկոպոս Հովակիմյանը եղել է Նիկոմեդիայի թեմի առաջնորդը: 1922թ. Թուրքիայից գաղթել է Բուլղարիա և ծառայել Ռուսեի ս. Աստվածածին եկեղեցում: Տե՛ս **Ղասաբյան Զ. Ղ.,** Ակնարկներ բուլղարահայ համայնքի պատմության, Երևան, 1986, էջ 89:

[2] Բուլղարահայ ձայն, 1927, № 1-3, 19 մարտ, էջ 2:

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 5091, թ. 12:

արտաքին գործերի և դավանանքի նախարարության կողմից, որից հետո ներկայացվելու էր Մայր Աթոռ՝ կաթողիկոսական կոնդակով հաստատվելու համար: Փաստորեն բուլղար կառավարությունը այդ քայլով Բուլղարիայի հայոց առաջնորդարանի և առաջնորդի ընտրելու իրավասությունը կենտրոնացնում էր իր ձեռքում, ինչպես դա արել էր մնացյալ այլադավան համայնքների՝ հրեաների (1920թ.) և թուրքերի դեպքում[1]:

Հարկ է նշել, որ բավականին ծանր էր նաև թեմական խորհրդի վիճակը, որը պետք է մի կողմից հավատարիմ մնար հայոց բարձրագույն հոգևոր իշխանությանը, իսկ մյուս կողմից չխախտեր և զգուշավոր քաղաքականություն վարեր բուլղար կառավարության հետ, քանի որ այն անմիջական կնիքն էր թողնելու բուլղարահայ համայնքի վրա:

Թեմական առաջնորդն ու թեմական խորհուրդը իրենց բնույթով ազգային-եկեղեցական կառույցներ էին, հետևաբար առաջին հերթին պետք է ճանաչվեին հայոց եկեղեցու առաջնորդի կողմից, այնուհետև, որպես պետական մարմին, հաստատվեին տեղական իշխանության կողմից: Թեմական խորհուրդը մտավախություն ուներ, որ Գերագույն հոգևոր խորհրդի կարգադրությունները կարող էին հակասել բուլղար կառավարության օրենքներին, այն դեպքում, երբ հայոց հոգևոր առաջնորդը սփյուռքիան թեմերին ուղղված կոնդակներում միշտ հորդորում էր հավատարիմ մնալ տվյալ պետության օրենքներին՝ միաժամանակ պահպանելով ազգային դիմագիծը[2]:

Թեմական խորհրդին դժգոհություն էր պատճառում այն, որ Սոֆիայի թաղական խորհուրդը, ընտրված լինելով բուլղար կառավարության կարգադրությամբ և վավերացված լինելով արտաքին գործերի և դավանանքի նախարարության կողմից[3], Գերագույն հոգևոր խորհրդի կողմից ճանաչվել էր և շարունակում էր նրա հետ հարաբերությունները, այնինչ բուլղարահայությունը դեռևս 1923թ. սահմանված կարգով կազմել էր սահմանադիր ժողով և, տեղական պայմաններից ելնելով, մշակել կանոնադրություն[4]:

Թեմական խորհրդի և Գերագույն հոգևոր խորհրդի հարաբերությունները հատկապես սուր ընթացք են ստանում 1927թ., երբ վերջիններս սկսում են մամուլում հանդես գալ միմյանց գործելակերպը քննադատող հոդվածներով: Թեմական խորհուրդը մայիսի 21-ին հետևյալ բովանդակությամբ հայտարարություն է տարածում, որը մեծ արձագանք է ունենում Մայր Աթոռում. «Իշխանութեան մը կողմանէ անգամ մը վաւերացուած ընտրութիւն երբէք երկրորդ վաւերացումի չենթարկուիր: Պետութեան

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, գ. 5087, թ. 28:
[2] Տե՛ս նույն տեղում, գ. 5091, թ. 12:
[3] Տե՛ս նույն տեղում, գ. 5087, թ. 28 շրջ.:
[4] Տե՛ս նույն տեղում, թ. 42:

մէջ կայացող ընտրութիւնը, որով կընտրուի ներկայացուցչական վարչական մարմին, երբէք չրկրնար վաւերացուել նոյն Պետութենէն դուրս գտնուող Իշխանութենէ մը… Մենք չենք կարող Բուլկարահայութեան շահերն ու իրաւունքները զոհել օտար միջամտութեանց մենք հաւատարիմ ու հարազատ զաւակներն ենք որքան Մայր Աթոռոյ, նոյնքան Պուլկար Հայրենիքին, բայց երբ Մայր Աթոռը իր անհեռատես ընթացքով, անշուշտ ակամայ ու առ անգիտութիան՝ կուզէ Պուլկարահայութիւնը դնել Պուլկար Պետական օրէնքներու հակասութեան մեջ…»[1]:

Թեմական խորհրդի կողմից հնչեցրած «օտար միջամտություն» արտահայտությունը վերաբերում էր ոչ թե Մայր Աթոռին, այլ մեկ այլ ուժի՝ խորհրդային իշխանությանը, քանի որ գաղտնիք չէր, որ վերջինիս հիմնական քաղաքականությունը եկեղեցու քայքայումն ու նրան հայ բնակչության շրջանում թե՛ Խորհրդային Հայաստանում և թե՛ Սփյուռքում լիազորություններից զրկելն էր[2]: Այդ իսկ պատճառով Մայր Աթոռի սփյուռքիան թեմերը հոգևոր կենտրոնի հետ հարաբերվելիս շատ զգուշավոր էին գործում: Փարիզի «Վէմ» հանդեսը անդրադառնալով Հայոց եկեղեցու իրավազուրկ վիճակին, գրում էր. «… Խորհրդային սահմաններում եկեղեցին, ազգային հաւաքական տեսական կեանքի տեսակէտից, իրաւազուրկ եւ այլեւս անարժէք հաստատութիւն է…»[3] : Սակայն Գերագույն հոգևոր խորհուրդը Հայ առաքելական եկեղեցու դեմ կիրառվող ոտնձգությունների և բռնությունների պայմաններում շարունակում էր պայքարել նրան սպառնացող ներքին և արտաքին արհավիրքների դեմ ինչպես կարողանում էր:

Գերագույն հոգևոր խորհուրդը իր հայտարարությունների մեջ բազմիցս շեշտում էր, որ թեմական խորհրդի ընդունած որոշումներին ընդդիմանալը «բուլղար կառավարության բարեխնամ վերաբերմունքի» դեմ չէր, այլ ուղղված էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի իրավունքները պաշտպանելուն[4]: Բուլղարիայի բոլոր հայաբնակ շրջանները, բացառությամբ Սոֆիայի թաղական խորհրդի, ճանաչել էին նորակազմ թեմական խորհրդի և առաջնորդի իրավասությունները, և թեմական խորհուրդը խնդրում էր Գերագույն հոգևոր խորհրդին, որ Ամենայն հայոց կաթողիկոսը վավերացներ այն[5]: Ինչ վերաբերում է կանոնադրությանը և այն «ժողովրդական ներկայացուցչության» կամքով սահմանված չլինելու մասին տարածված լուրերի, թեմական խորհրդը չէր կիսում այդ կարծիքը, քանի որ 1924թ. Ֆիլիպեում

[1] Նույն տեղում, գ. 5091, թ. 11-12:

[2] Հայոց պատմություն, հատոր 1, գիրք առաջին, թ. 448:

[3] **Ալեքսանյան Հ.**, Հայկական համայնքները Խորհրդային հանրապետություններում 1917-1941թթ., թ. 128, տե՛ս նաև Վէմ, Փարիզ, սեպտեմբեր-հոկտեմբեր, 1934, էջ 121:

[4] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, գ. 5087, թ. 28 շրջ.:

[5] Տե՛ս նույն տեղում, թ. 27 շրջ.:

գումարված ընդհանուր համագումարին (սահմանադիր ժողով) մասնակցել էր նույնիսկ ֆիլիպեի թաղական խորհուրդը և ճանաչել այդ կանոնադրությունը[1]: Սոֆիայի թեմական խորհուրդը մեղադրում էր Գերագույն հոգևոր խորհրդին, որ նա Սոֆիայի թաղական խորհրդին կոչ էր անում հարաբերությունների մեջ չմտնել և նյութական օժանդակություն չտրամադրել թեմական խորհրդին, ավելին՝ նմանատիպ բովանդակությամբ շրջաբերականներ էր ուղարկում մնացյալ թաղական խորհուրդներին:[2]

Արդեն 1927թ. օգոստոսին թեմական խորհրդի անդամ Էմանուել Ջերահոֆը, անդրադառնալով Գերագույն հոգևոր խորհրդի հետ առաջացած խնդիրներին, հավաստում էր, որ իրենք մշտապես հավատարիմ են մնացել Ամենայն հայոց կաթողիկոսությանը և միաժամանակ հերքում էր այն փաստը, որ բուլղար կառավարությունը միջամտում էր թեմի ազգային-եկեղեցական գործերին, ավելին՝ մեղադրում էր Գերագույն հոգևոր խորհուրդին, որ, եթե նա ժամանակին արձագանքեր թեմական խորհրդի դիմումներին, վերոնշյալ խնդիրները այլ ընթացք կստանային[3]:

Ի վերջո 1927 թ. դեկտեմբերի 26-ին Հայոց հայրապետը, № 1085 կոնդակի համաձայն, թեմական խորհրդին տալիս է հետևյալ հանձնարարությունները.

- ուղարկել բուլղարահայ պատգամավորական ժողովի ընդունած կանոնադրությունը.
- թաղական խորհուրդների կողմից թեմական խորհրդի նկատմամբ վերաբերմունքը ըմբոստություն չհամարել
- հետևողական լինել եկեղեցական կարգապահությանը, քանի որ այն արձագանքներ է թողնում համայնքային ներքին կյանքի վրա[4]:

Թեմական խորհրդի և Գերագույն խորհրդի հարաբերությունների սրացման հաջորդ ալիքը պայմանավորված էր բուլղար կառավարության կողմից առաջնորդական տեղապահ Սարգիս քահանա Ղարիբյանի պաշտոնանկության հետ: 1926թ. դրությամբ թեմը փաստացի երկու առաջնորդ ուներ, որոնցից մեկը Իզմիրի ծերունազարդ Ստեփաննոս արքեպիսկոպոս Հովակիմյանն էր՝ Սոֆիա նստավայրով, (նրա առաջնորդությունը ճանաչվել էր թեմական խորհրդի և բուլղար կառավարության կողմից), մյուսը՝ Սարգիս քահանա Ղարիբյանը՝ Վառնա նստավայրով: Թեմական խորհրդի հաղորդամբ մամուլում տարածում էր ստացել այն տեղեկությունը, որ Գերագույն հոգևոր խորհուրդը այդ լուրը ստանալուց հետո Սարգիս քահանա Ղարիբյանին հորդորել էր, որ. «Դուք Ձեր պաշտօնը պիտի

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 28 շրջ.:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Տե՛ս նույն տեղում, գ. 5091, թ. 13:

շարունակէք, հակառակ անոր որ ձեզի կառավարությունը պաշտօնանկ ը-րած է եւ ձեր տեղ նշանակած է Գերապատիւ Ստեփաննոս արքեպիսկո-պոս Յովակիմեանը»: Նոյն թվականի հունիսին «Արաքս» թերթը տպագ-րում է Սարգիս քահանա Ղարիբյանի հեղինակած «Թեմականի խէղաթիւ-րումներուն դէմ ճշտում մը» հոդվածը, որտեղ հերքվում էին այն լուրերը, թե Հայոց հայրապետը առաջարկել էր իրեն շարունակել աթոռակալումը[1]:

Բուլղարահայոց թեմի անկազմակերպ վիճակը կարգավորելու նպատակով, Ամենայն հայոց կաթողիկոսի կոնդակի համաձայն, կաթողի-կոսական պատվիրակ է նշանակվում Գարեգին եպիսկոպոս Խաչատրյա-նը, որը պետք է ուսումնասիրեր թեմի ազգային-եկեղեցական, վարչական խնդիրները, որից հետո պատգամավորական ժողովի միջոցով կենտրո-նական թեմական վարչության և առաջնորդական կանոնավոր ընտրութ-յուններ կազմակերպեր[2]: Ամենայն հայոց կաթողիկոսի կողմից այս քայլը կարևոր ազդակ էր Բուլղարիայի հայոց թեմի հետ գործուն և արդյունա-վետ հարաբերություններ հաստատելու համար:

Թեմական խորհրդի կողմից Գարեգին եպիսկոպոս Խաչատրյանի նշանակումը դրականորեն չի ընդունվում, քանի որ վերջինիս կարծիքով Գերագույն հոգևոր խորհուրդը թեմի կանոնադրության, առհասարակ թեմի նկատմամբ սահմանադրական տեսանկյունից որևէ իրավունքներ չուներ[3]. դրա իրավասությունը պատկանում էր ընդհանուր (պատգամավորական) ժողովին, որի հրավիրման համար թեմական խորհուրդը նրա օրակարգը նախապես պետք է ներկայացներ արտաքին և դավանանքի նախարարութ-յանը[4]: Գերագույն հոգևոր խորհրդի պատվիրակի այցը բնութագրվում էր հետևյալ կերպ. «Միթէ՞ տարօրինակ չթուիր թէ կազմակերպուած թեմը մը, որ ունի իր կանոնադրութիւնը, իր Առաջնորդը, իր Թեմական խորհուրդը, վերստին կուզէն կազմակերպեն: Կառուցուած շէնքի տեղի մը վրայ կուզեն նոր շէնք կառուցանել:… Միթէ՞ այսպիսի կործանարար, աւերիչ առաքելու-թիւն ունի Գերոգույն Հոգևոր Խորհրդի պատուիրակը…»[5]:

Թեմական խորհրդի անդամ Է. Ջերահոֆը գտնում էր, որ կաթողիկո-սական պատվիրակի այցը կարող էր սրել կառավարության հետ հարա-բերությունները, քանի որ այդ որոշումը առանց վերջինիս նախազգուշաց-վելու էր կայացվել: Նա առաջարկում էր Հայոց հայրապետին նոր թեկնա-ծու առաջադրել ու նախապես այդ մասին ծանուցել կառավարությանը:

[1] Տե՛ս նույն տեղում, գ. 5087, թ. 56:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 28 շրջ.:
[3] Տե՛ս նույն տեղում:
[4] Տե՛ս նույն տեղում:
[5] Նույն տեղում:

Վերջինս փորձում էր բացատրել, որ խնդիրը ոչ թե Գարեգին սրբազանի անձն էր, այլ՝ կառավարությանը նախապես այդ մասին տեղեկացնելը[1]:

Թեև Մայր Աթոռի կողմից որքան էլ հերքելի լիներ այն, որ. «Ցարդ իրբիք պատահած չի որ Պիտութիւնիրը միջամտին Հայոց Հայրապիտի ազգային իկիղիցական իրաւասութիանց մէջ», թեմական խորհրդի պնդմամբ իշխանությունները այդ վտանգը զգալու դեպքում այնուամենայնիվ միջամտելու էին, և բուլղար հյուպատոսարանի միջոցով Գարեգին սրբազանի Բուլղարիա այցի չեղարկումը դրա ամենացայտուն օրինակը հանդիսացավ[2]:

Թեմական խորհրդի և Գերագույն հոգևոր խորհրդի միջև տարակարծություններ են առաջանում նաև 1934թ. հաջորդ թեմական առաջնորդի՝ Երվանդ եպիսկոպոս Փերտահաճյանի աթոռակալման ժամանակ: Այս անգամ ևս առանց Գերագույն հոգևոր խորհրդի իմացության արտակարգ պատգամավորական ժողով է գումարվում, որից հետո թեմական խորհուրդը դիմում է արտաքին գործերի և դավանանքի նախարարությանը, որը նույն թվականի հունվարի 17-ի թիվ 9 հրամանագրով ճանաչում է նոր թեմական առաջնորդին: Գերագույն հոգևոր խորհրդի անդամ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանը թեմական խորհրդին հայտնում է, որ, նկատի ունենալով պատգամավորական ընդհանուր ժողովի գումարման և առաջնորդի հրաժարման ընթացքում թույլ տրված իրավական թերությունները, Ամենայն Հայոց կաթողիկոսը չի ճանաչում Երվանդ եպիսկոպոս Փերտահաճյանի աթոռակալումը, ավելին՝ հրամայում է. «…առաջնորդի յիշատակութիւնը, կամ նրա դադարեցումը եկեղեցիներում զուտ կրօնական տնօրէնութիւն լինելով, կարող է տեղի ունենալ Ամենայն Հայոց Հայրապետի առաջնորդի հաստատման առթիւ արձակած Հայրապետական կոնդակի զօրութեամբ միայն»[3]: Ամենայն Հայոց կաթողիկոսի կոնդակները և Գերագույն հոգևոր խորհրդի գրությունները դեռ Բուլղարիա չհասած Մայր Աթոռը ստանում է 89-ամյա Ստեփանոս արքեպիսկոպոս Հովակիմյանի մահվան լուրը, որից հետո միայն ստիպված է լինում ճանաչել Երվանդ եպիսկոպոս Փերտահաճյանի աթոռակալումը:

Երկու հոգևոր կառույցների հարաբերությունների բարելավման վրա զգալի ազդեցություն է ունենում 1934թ. Եվրոպայի կաթողիկոսական պատվիրակ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանի՝ Բուլղարիա այցելությունը[4]: «Ազատ խոսք» թերթը, անդրադառնալով կաթողիկոսական պատվիրակի այցին, նշում է. «Շատ բարդ ու պատասխանատու առաքելութիւն մը ունի կաթողիկոսական պատուիրակը: Ան պէտք է այցելէ հայ

[1] Տե՛ս նույն տեղում, թ. 46 շրջ.:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 33, 54:
[3] ՀԱԱ, ֆ. 409, գ. 5110, թ. 55:
[4] Տե՛ս նույն տեղում, գ. 5085, թ. 11:

գաղութները, լուծելու համար ծագած ծանոթ վեճերը, որոնք իրականին մէջ երկու հակամարտ բանակներու վերածած են հայութիւնը գրեթէ բովանդակ գաղթաշխարհի մէջ»[1]: Սրբազան նվիրակը հմտալից գաղափարախոսություններով, քարոզներով բուլղարահայության շրջանում մեծ խանդավառություն է առաջացնում, այն աստիճան, որ «օտարացածնէրը, իրէնց հայ անունին համար հպարտանալ սկսան: Երանի թէ Մայր Աթոռը դիւրութիւն ունէնայ գոնէ 5 տարին անգամ մը, նման օգտաշատ նուիրակութիւն ստեղծէլ և առաքէլ, ի փրկութիւն ուծացման…» նշում է բուլղարահայ հոգևոր գործիչ Գրիգոր վարդապետ Կարապետյանը Խորեն Մուրադբեկյանին գրած նամակում[2] : Վերջինս փաստում էր նաև, որ Գարեգին սրբազանը մեծ աշխատանք է տարել ազգային առաջնորդարանի և թաղական խորհուրդների միջև լարված հարաբերությունների կարգավորման ուղղությամբ, որը անխոս կարևոր և որոշիչ քայլ էր ընդհանուր բուլղարահայ համայնքի ներքին կյանքի կազմակերպման համար[3]:

1937թ. Երվանդ եպիսկոպոս Փերտահճյանը խառը հիմունքով նոր թեմական խորհուրդ է կազմակերպում և ներկայացնում բուլղար կառավարության հաստատմանը[4]: 1938թ. դեկտեմբերի 10-ին Երվանդ արքեպիսկոպոս Փերտահճյանը[5] կնքում է իր մահկանացուն, և հոջորդ տարվա ապրիլի 14-ին գումարված նիստում թեմական խորհուրդը նոր տեղապահի թեկնածու է առաջադրում Գրիգոր վարդապետ Կարապետյանին: Այդ մասին խորհուրդը ապրիլի 20-ին տեղեկացնում է ինչպես Ամենայն հայոց կաթողիկոսին, այնպես էլ Բուլղարիայի արտաքին գործերի և դավանանքի նախարարությանը: Վերջինս թեմական խորհրդի որոշումը հաստատում է մայիսի 4-ին: Գերագույն հոգևոր խորհրդը իր հերթին, հաշվի առնելով Գրիգոր վարդապետի թեմական կյանքում ունեցած բարի համբավը, իր պատասխանը չի ուշացնում և 1939թ. մայիսի 17-ի № 87 նամակով տալիս է նաև իր համաձայնությունը: Այսպիսով, թե՛ թեմական նորանշանակ առաջնորդի նկատմամբ տիրող ընդհանուր դրական վերաբերմունքի, թե՛թեմական առաջնորդական ընտրության ճիշտ կազմակերպման ընթացքի շնորհիվ, թեև երկու կառույցների միջև առկա էին որոշ խնդիրներ, այս անգամ թեմական կյանքի կազմակերպումը կատարվում է խաղաղ և առանց ցնցումների :

---

[1] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, գ. 5113, թ. 1 շրջ.:

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409,ց. 1,գ. 5118, թ. 1-2:

[3] Տե՛ս նույն տեղում, թ. 1:

[4] Տե՛ս ՀԱԱ, Ֆ. 409, գ. 5128, թ. 1:

[5] 1937թ. օգոստոսին Երվանդ եպիսկոպոս Փերտահճյանին շնորհվել է արքեպիսկոպոսի աստիճան:

Ընդհանրացնելով կարող ենք նշել, որ 1920-1930-ական թվականներին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի և Բուլղարիայի հայոց թեմական խորհրդի հարաբերությունների բարդ շրջափուլը պետական-գաղափարաբանական հիմքեր ուներ, քանի որ Խորհրդային Հայաստանում պետական մակարդակով հակաեկեղեցական դիրքորոշումը և բուլղար կառավարության կողմից հայոց եկեղեցու իրավասությունները իր ձեռքում կենտրոնացնելու քաղաքականությունը չէին կարող չազդել բուլղարահայ համայնքի հոգևոր կյանքի կազմակերպումը գլխավորող թեմական խորհրդի գործունեության և հայոց հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ նրա հարաբերությունների կառուցման վրա:

Мариам Акопян, Отношения Высшего духовного совета Первопрестольного Святого Эчмиадзина и Болгарского Армянского епархиального совета в 1920-1930гг. - В 1920–1930-е годы сущность сложных отношений Высшего духовного совета Первопрестольного Святого Эчмиадзина и Болгарского Армянского епархиального совета имела не столько церковный характер, сколько была обусловлена государственно-политической, в частности советской политикой притеснения церкви, и желанием болгарского правительства ограничить права духовного центра армян Первопрестольного Святого Эчмиадзина в Болгарии.

Mariam Hakobyan, The relations between the Supreme spiritual counsel of the Mother See of Holy Etchmiadzin and Bulgarian-Armenian Diocesan Council in the 1920-30s. - 1920-1930s, the complicated relations between supreme spiritual counsel of the Mother See of Holy Etchmiadzin and Armenian Diocesan Council of Bulgaria had not so much church bases as it was conditioned by the state-political, in particular the policy of the Soviet power church persecution and the by Bulgarian government's desire to limit Armenian Spiritual Center of the Mother See of Holy Etchmiadzin in Bulgaria.